Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

70b

2 шч.
1016

2013

Айриванкъ или Бегарбадамъ.
Мангуни сочиненіе.
Варшавата 1871 въ 32.
цѣна 20 к.

ԱՅՐՈՒՎԱՆՔ

ԿԱՄ

ԳԵՂԱՐՈՒՍՅ ՎԱՆՔ

№ 1579-1

1363

600
Մայր

ՐԱ
ՀԿԵՏ

ԳՐԵԱՑ ՄԱՆԿՈՒՆԻ



ՈՒՅԻ — 1871

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

ՀՐԱՄԱՆԱՏ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՆՑ Դ.

ՎԵՀԱԲԵՓ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

1016-2013

№ 1011

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Յամին Փրկչական 1868 և Հայոց ՌՃԺԼ, յորում զառանէր զ Տ. Կաթողիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Գ. յօդաւորութեան ի մեծաստանին Գեղարդայ, յամսեանն Յուլիսի, անձամբ անձին տեսեալ և զննեալ գրեցի զտեղագրութիւն նորին հանդերձ արձանագրութեամբքն, զոր ահաւասիկ ըստ խնդրոյ ոմանց բարեպաշտից թողում ընծայել ի լոյս։

Գոյզնաբերայս այս աշխատութիւն իմ յաշխարհիկ բարբառ կրէ զառաւելութիւնս ինչ քան զգրեալն ի Ստորագրութեան երից զառաւացն Ընարատայ, արարեալ յԵպիսկոպոսէն Շահխաթունեանց։

Եթէ լեցի սա հաճելի յաչս բարեպաշտ մերազնէից ի հոգևոր մխիթարութիւն և ի զբօսանս՝ յաղագս սխրագործութեանց երանելեաց մերոց նախնեաց, շա՛տ է ինձ

համարել զայն փոխարէն չնչին վաստակոց. որով միանգամայն հարազատ որդիք փրկել Հայրենեաց մերոց Հայաստանի՝ նկրտեցին նմանել նոցա բանիւք և արդեամբք։

Ո՛չ աւելորդ վարկանիմ յաւելուլ խմին զատորագրութիւնս Ս. Յովհաննէսին Աղջոց, Ամենափրկչին։ Հայոց Թառայ և զԹառարգելայ վանօրէից, և զԿեղեցւոյն Խիրանաւորի Աւանայ, որոց առաջին երկոցունցն շրջագայեցի յայցելութիւն որբալի և աղեխարշ աւերակայ՝ ընկերակցութեամբ Յովակիմ Սարկաւագին զատաւլեանց Օշականեցւոյ։

Մանկոնք

ՌՑԻ մարտի ԺԸ.

22 Մայիս 1871 տի

ԱՅՐԻՎԱՆՔ

ԿԱՄ

Դեղարդայ վանք

Հայաստանի հնագոյն և երևելի վանքերէն մինն է Այրիվանք կամ Այրից վանք՝ այժմ Դեղարդայ վանք կոչեցեալ։

Անդրէն ճարտարապետուած միանգամայն զարմանալի փորուածքներով ժայռից մէջ՝ ունի մեծաստուար արժանի ուշադրութեան պատմական կարևոր անցքեր և կը պարունակէ հնտաքրքրական արձանագրութիւնք՝ զորս անդադրութեան հետ արժան՝ կը համարիմ հաղորդել ցանկացողաց։

Հաւանական է, զի մեր երկրորդ Լուսաւորիչ Ս. Գրիգոր Պարթևի օրերով շինուած է այս վանք, և զուցէ Տրդատ թագաւոր կառուցանել տուած լինի զայս՝ հոգւոյ փրկութեան անձկանօք ի խորշս վիմաց և ի լերինս առանձնաւէր կեանք վարելու եռանդ ունեցող ճգնաւորաց համար, որ շատ յարմարութիւնք և դիւրութիւնք կը պարունակէ տեղը։

Գուցէ զառաջինն՝ մի այրի մէջ փոքրիկ եկեղեցի փորուած լինի, ուստի կոչուած է Այրեվանք կամ Այրից վանք։

Ի հնուց հետէ, գրեթէ միշտ անուանի բարեհամբաւ և պայծառաշէն եղած է այս վանք. յորմէ Գրիգոր Լուսաւորիչ — ինչպէս աւանդութիւն է, — Մեծն Անիրսէս Հայրապետ, Խահակ Պարթև Հայրապետ, Յովհաննէս Օ. Կամսարական Դրասխանակերտցի, Սահակ Կամսարական Աղուանից, Գրիգոր Ժ. Կամսարական՝ ինչպէս և ի 1869 թուին Գէորգ Գ. Կամսարան՝ և այլ բարձրաստիճան Եկեղեցականք մերթ

քեզ մերթ ասա բնակած են թե, առանձնական կենաց և մշտամնաց աղօթից ունձիանօք, թե՛ այլոց թեամբք, թե՛ օգաւորութեամբք, և թե՛ բռնաւորաց ձեռքն ազատ և ապահով մնալոյ ազատաւորեալ մեր թագաւորքն և՛ իշխանքն և՛ այլ շրջակայ բնակիչք շատ անգամ հինից և անապատոյն թշնամեաց ապատակութիւնեալն և արտաքսութիւնեալն և զերութեամբ փոխեալքով իրրև յամենայն բերան ապատանարանեալ կը յօրինեին ինքեանց ապա փոնաց բոլորքն. և արդեւք են այնպիսի այրեր՝ խորշեր և պատապարաներ, ուր ամենեին անմերձենալի են թշնամեաց, և այնպիսի անառիկ գիրքեր ունին, որ ի պաշարման անգամ՝ առատ պաշար ունենալ բաւական է՝ պաշարող թշնամեաց յուսահատութիւն պատել և ի բաց հեռացուցանել զնոսա: Ոչա ոմանց գիրքց գիտարաներ և սեղան են, և ինչպէս յաւանդութեանց ցանկացայ ասել, որոց գերայ գիտք կարդացեալ ապան-

լոմ շուրջանակի կը գտանեն հնագոյ գարբերը և ճանապարհները, որպէս զի թշնամեաց մի խումբ երևելոյ՝ իսկոյն ձայն տան և բնակիչք հաւաքուին ու պատրաստուին ի նոսին։

Դրբեանն Հայրապետք մեր, և մերթ հոյակապ իշխանք առանձին հոգ առնէր և խնամք տածած են վանուցս վերայ. որով հնագոյն այլ և այլ վիմագրոք և հիւսուածոյ եկեղեցիք և մատուռներով պայծառացած է, և այլևայլ կարևոր շինութեամբք զարդարուն հանդիսացած։ Եթէ մեր Հայրենեաց՝ Հայաստանի բազմաղէտ և դառն անցից մատակցել, զուրկ մնացած չէ, և ոչ տակաւ անգամ ամայացած, բայց և այնպէս միշտ հարազատ պաշտպանների կրկին նորոգուած և շքեղացած և երևելի և արդիւնաւոր ուխտաւորի եղած է։

Այս մեծատան զառաջին աւերեցաւ և կողոպտեցաւ Նոր ասիկանի զօրքերէն յամին 923։

Ի երջին աւերումը վերանորոգեցաւ 1834 թուին՝ հրամանաւ Յովհաննէս Բ. Պատրիարքին Կարբեցւոյ ի ձեռն Յովհաննէս շուշտակ վարդապետի։

Դրբեանն ասա պատհուած է Ս. Գեղարդին Փրկչին, ուստի և ի յետին ժամանակս առաջին Ներսիսեան անունը փոխուելով՝ Գեղարդայ վանք կոչել սովորութիւն եղած է։

Բուս ուսումնական մասին՝ այս գրականութեան փառք տալոյ և անուանի հանդիսանալոյ արժանի յիշատակք չեն մնացեր այս վանուցս անցելոյ մէջ՝ ինչպէս գծագրագրաց և ի ներկայս Գուցէ ի հնումն ունեցած լինի մի վարժարան Մխիթարեանից հետեր, բայց կրժուարանամք՝ կամ լաւ ևս ասելով՝ չեմք կարող գտանել ուսեալ և արդիւնաւոր մի պատուղ յառաջացած՝ բաց ի Ներսիսեանցի Մխիթար Ա. արդարեն, որ ծ. Գ. դարու մէջ ծաղկեցաւ և էր վարդան Ներսիսեանից, բայց հաստատ չգիտեմք՝ թէ ոնբ տա-

առնին տուն։ Վասնոյ մեր Հեռագրութիւնք Եւրոպայեց վերայ տեղադրեալ են ամբ միայն ոմն բուսակուռ *)։

(*) Այժմ Կաֆրոզինկոսը մի վարժարան կարգեց, որ մերձակայ Կողմ գեղ քահանայի և այլ աղքատաց որդիք կը կարդան՝ տիւ և գիշեր մնալով անդ. և այս տարի նիւթերը կը պատրաստուին, յառաջիկայ տարին մի վարժարան շինել տալոյ համար անդ։

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՆ

ԱՅՐԻՎԱՆԻՑ

ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔՆ

Պատայից գաւառին մէջ մերձ ի սահմանս Գեղարքունեաց՝ իբր մի և կէս ժամ Գառնեայ հիւսիս. արևելեան կողմն հոսող Գեղայ անցաւոյթ բիւրեն արևմտեան ստորոտը, ինչպէս կերևի պատկերս մէջ, Գառնեայ ձորոյն գրեթէ՝ սկսուած տեղը, ասիպին լերանքը ու բուրնեղով շրջապատեալ է Ս. Յրիսանքը, որոյ արտաքին հատուածը. պարսպին իբր 4—6 քայլ հեռաւորութեամբ զառնեմատի ի լերանց և ի բլուրց ինչանեղով և կարկաչելով կը սահի և կանցնի գեղային Գառնեայ:

Պարիսպը քառակուսի ձևակերպութիւն ունի. որոյ արևմտեան կողմը փոքր ինչ ի շեղ օրացած՝ մնացեալս զէպ ի

մէջ բաշխուած բարձր ու սեպուած մեծ վիճակն կից է։ Հիւսիսային որմը վիմով բարձր առապարի վերայ հաստատուած է. իսկ միւսներ ցածուն են։ Երկու դուռ ունի վանքս, մեծն ընդ հարաւ սեպուած վիճակն մերձ արևմտեան կողմն՝ լայն ու խուշապարդ, և միւսն անձուկ՝ ի գետակն Երանելոյ արևելեան կողմը։

Արևելեան պարսպին ի ներքոյ, ինչպէս կերևի ուղղագծիս մէջ, կան մատուռներ, սենեակք ծառայից, և այլ հարկաւոր իրաց պահարանք. նոյն պարսպին դէզ ի հարաւ ծայրն սկսած՝ հարաւային պարսպին վերայ՝ զ՝ անահօր և միաբանից և ուխտաւորաց սենեակք, լուացարան, հացարան, թոնիր, կթարան և ինչ. իսկ արևմտեան պարսպին հիւսիսային անկիւնն սկսեալ դէզ ի ներքս են ախուռներ, և այլ դարանք։

Եօթն եկեղեցիք կան մենաստանիս մէջ, որ հիսքանչ յօրինուածովք շինուած են. զորս հաստատիօրէն եօթն եկեղեցի կոչեն

սովորութիւն եղած է, և միանգամայն 40
մասուռ ու պատարագի խորան ունի։

Ի վանուց ի նեղքս մտանելով՝ ընդառաջ կը գայ բոլորովին կոփածոյ քարերով հիւսուած և կառուցուած մեծ եկեղեցին, ուր սովորաբար կը կատարուի ժամերգութիւն, որ և բաժանեալ է ի ժամատուն և ի Տաճար։ Տաճարն առանց սեանց բարձրացած է սրածայր կամարակիպով։ Որս անկեանց մէջ կը գտնուին սանդատուններ կամ աղօթատուններ կան սիւներով զարդարուած։ Երեքեան անկեանց՝ այսինքն Աւագ խորանին (սեղանին) երկու կողմը գտնուած սանդատանց վերնատուներուն դռները սեղանոյ վերայ են. իսկ դիմացի՝ այս է՝ արևմտեան դրան երկու կողմանց անկեանց մատուանց վերնայարկաց կը մտանուի ընդ որմն հիւսուած քարեայ նեղ սանդուղքներով *)։

(*) Որս ի հնումն իշխանազունք կամ իշխանուհիք Հայաստանի կաղօթէին, և երբեմն այնպիսի տեղեր յատկապէս շինել կը տային իշխանք

Սաղ խորանի կիսակամարին (ի ներքուստ) հիւսիսային պատին վերայ ինչպէս և ի հարաւային կան արձանագրութիւնք։ Հիւսիսայինը՝ ասան կարգ մեծ և փոքր քարերու վերայ՝ ասան և երկու տողով փորագրուած է։ Սաղմին տողին նայելով՝ իբր 4 մատնաչափ՝ երկայնութեան եղերքներին տաշուած է գուցէ վերանորոգութեան առիթով, որով՝ դա և շատ տեղեր մաշուած ու անկարդացած լինելով՝ հազիւ հազ և բազում դժուարութեամբք և ջանիւք կարողացայ ընթեռնուլ ստորև տպուածը։ Իսկ հարաւ-

---

մեր և իշխանութիւնք, և ուրիշ ազգի ազգի ընծայաբերութեամբք և կտակներով ուխտ և գաշինք կը կրէին վանօրէից հետ և կը հաստատէին, որպէս զի երևելի և նշանաւոր տաղաւարաց և այլ տօն աւուրց մէջ յատուկ Ս. Պատարագներ և պաշտօնք մատուցանեն վասն փրկութեան հոգւոց իւրեանց կենդանեաց և ննջեցելոց։ Այսպիսի մատուռներ և աղօթատուներ Հայաստանի մի քանի անուանի վանօրէից ինչպէս Հառիճոյ՝ Ցովհաննաւանուց Եղն. մէջ կան։

սայինը հինգ տող բայց բաւական դիւրընթեռնելի էր, թէև ի վերջոյ պակաս ունէր, որ եւս զուցէ, կարուած լինի ի վերանորոգութեանն։

Ս. հաւասիկ հիւսիսայինը։

,,Շ՝նորհիւն Աստուծոյ եւ Պաշ խշ-
,,խան(՝) որդի Պ՝ասակայ յազգէ Հ՝ազբա-
,,կայ(՝) զանձայդին արարի ի տերանց աշ-
,,խարհիս սուրբ ուխտս Աշխի վանս ի-
,,նամբ և դաշտաւ և ամենայն կարգու-
,,թեամբ որ կայր ի սմա և . . . . ամենա-
,,ւոյց ոսկի և արծաթ ի խաչ և պահա-
,,ռանի իկ . . . . ուռվալիք և քշոցս(,) և
,,շինեցի եկեղեցիս(,) և կանգնեցի սուրբ
,,նշանացս . . . ի գերեզմանացառունն
,,ինձ և ազգի իմոյ յաւիտեան(.) և եռու
,,ի սպասաւորութիւն սրբոցս . . . ի հա
,,լալ Պ՝անձայդին գեղն(,) զՄղջաբերդ(,)
,,զՄերդաղն և ԺՈ՝Ռ սպ՝ Աշխ եթէ ոք
,,յիմ յազգէ կամ յաւտարաց զիմ ոս-
,,կով գնած հայրենիքս ի այս սրբոցս հա-

,,նել Ջանոյ զինչ և իցէ պատճառ . . . .
,,զիմ անդարձ ապրդողդ արձանի Հանել
,,լեցի(,) այնպիսին . . . Աստուծոյ . . .
,,ոգութեանն . . . . . Ի . . . ի տա-
,,ղին անխաբեան կատարի . . . արարանի
,,Զոս . . . ,,*) ։

Հարուածին է։

"Պատճառն Աստուծոյ եւ Հասան որդի
,,Ղազարեանցոյ թոռն մեծի Սիմեոնոյ թա-
,,գաւորացին միաբանեցաք առաջ ուխտս
,,և եռու պատուական Աբեսարան . . .
,,և տաճնական(,) և սպասաւորք տրա խոս-
,,տացան ի տարուոջն Ի՝ աւր պատարագ
,,Հատկին, Ն՝ ինձ, Զ՝ իմ մաւրն "Նանա-
,,յին, Ի՝ Ռուզուքանոյ կենակցի իմոյ(.)

(*) Սոյն արձանագրութեան ներքև մի կարգ շարուած հինգ կտոր քարից վերայ կրկին արձանագրութիւն կը նշմարուէր, որոյ թէպէտ սկզբնաւորութեան մի քանի բառեր կը գիտուէին, բայց շատերը այնքան մնշուած և քերուած էին բոլորովին, զի անհնար եղաւ վերծանել։

,,որ խափանէ (,) ՅԺԹ. Հայրապետաց
,,Նզովեա . . . :,,

Ընտաքուստ հարաւային պատին՝ վերայ հարաւային դրան կամարին արևմտեան կողմը արձանագրուած է հետևեալը ինն թիզ երկայնութեամբ և երկու և կէս լայնութեամբ՝ գրեթէ հինգ տողով :

,,Ի թագաւորոյն և աշխարհակալ Ընթա-
,,բակ և Խանէի և արեան հարազատի
,,իւրոյ տիեզերակալին Օ՚ա . . . ապ Սարգ-
,,սի ամիր սպասալարին և որդւոյ նորին
,,Աւագին և Շահնշահի(.) որ էառ ի
,,Կայենով և Կայծանով մինչ ի . . .
,,ի ՅԱկանայ և մինչ ի Նախճուան և ան-
,,տի մինչ ի Կամսարական . . յ . . աւգ-
,,նութեամբն(.) և ապա եկի ի սուրբ
,,ուխտս ի ՅԱյ . . . եկեղեցիքս և զսուրբ
,,քրս(.) և անուշ թուեցաւ յիմ անուն
,,արարի զիմ յիշատակաւ վերագրեցի և
,,եա . . Ռերդ . . աղն սուրբ Կաթողի-
,,կէիս լուսաւորչ(Ի) Լ0-ԿԲ որ Հակառակի
,,յիս(,) սևերկս զայ և յերկից սուրբ

Էջ 1016-2013

,,ժողովոյն նղովեալ . . . . ՅԱՅ. ա-
,,մէն *)։,,

Ահոյն դրան կամարին ձեւին պատշաճ ծաղկեայ շրջանակին վրայի պատուհանին գլուխը գտնուած քարին վերայ քանդակուած է մի առիւծ, որ մի ցուլի վերայ եկած է և խրրու թէ գլխի կողմէն կամի պատառել զայն։

Դրան վերայ արձանագրեալ է, որ բառական գժուարութեամբ հեռևեալը հաղիւ քաղուած է, թէև կրկին ոչ առանց սխալանաց, և ի տեղիս տեղիս բառերը անհասկանալի են։

,,Կամաւն Աստուծոյ ես Սոլիորդ թա-
,,ղայից զզէշիմղիսի աղբէն Դսիսիսու և
,,Նորոգեցի զԱթոդիկէս յիշատակ ինձ և
,,Դաղային երկ Սաւլթանին և ամուսնին

(*) Այս արձանագրութեան քարերը կերևի թէ վերանորոգութեան առիթներով խախտուած են, որ չորս տողից ի վերջաւորութեան տառեր կը պակասին. նաև մէջէմէջ մի քանիքը անվերծանելի կը գտնուէին։

,,իմոյ Դաւրէջանէն և որդոյն իմոյ Ստեփա-
,,նոսէն եղբարցն իմոց Ղ. Ալին և Ղ. աւրա-
,,պին ամուսնուն իմոյ դինագնեորդ Յով-
,,հաննէսին և հանգուցելուն ի Թէքէոպոս Պա-
,,պին նուիրէին թղ սուրբ Գեղարդն (,) և
,,եռու զխաչն նորհնապզվառ։ ,,

,,Յով. Ի՛Գ պահեն։,,

Որպես ներքև՝ կամարին կլորութեամբ քանդակուած է։

''Կամաւն Աստուծոյ ես Տիթորս միա-
,,բանեցայ սուրբ ուխտիս(.) եռու Ա՛. Գ.Հ.
,,խոստացան Ն՝ աւր ժամ։

Վերոյիշեալ պատուհանին ներքև վերջին վերանորոգութեան թուականը կայ Միքայէլ վարդապետի անուամբ, որ բաւական արդիւնաւոր եղած է այս վանուցս համար ըստ նիւթականին։

''Շ՝նորհիւ ամենազօրին Աստուծոյ երրորդ անգամ նորոգեցան տանիքն Աւրի
,,վանիցս սուրբ Գեղարդայ հանդերձ երկոքումբ գմբէթիւք, որոք Լուսաւորչեան
,,Հայոց ժողովրդականաց և բազմաջան

,,աշխատութեամբ Պ՝անահրն Միքայէլ
,,վարդապետի Զարոեանց Տփխիսեցւոյ.
,,որև գնեաց յօգուտ վանիցս . . .
,, ... զԳ՝ողտ գիւղն ընդ միոյ Ջար-
,,զացի։ Ի թիվ. ՌՅԵ. յամի Տեառն
,,1855։,,

Դրսի ժամատուն կամ գաւիթ աւելի ընդարձակագոյն է՝ միաստանի հսկայաձև և թանձր վերնախարսխօք զարդարուած և չորս սիւներու վերայ կառուցուած. որոց վերայ բարձրացած է քառակուսի կամ-ղիկէ, յորում միայն է մի մեծ լուսամուտ՝ շուշանակի խորշխորշեայ փորուածներով քանդակագործուած։ Սեանց վերայ ուրն կամար ձգուած է, որք կը տրոհեն ուրն կամարաբաժիններու։

Ի տաճարն մտանելոյ դրան աստի և անտի կանգնած են երկու մեծամեծ խաչքարեր ընդ որմն ի վեր՝ պատուանդաններով խարսխուած, որոց միոյն՝ Հարաւայնոյն երկարնութիւնը տասն թզաչափ, ու լայնութիւնը հինգ ու կէս, և ի գագաթն՝

Փրկչական մի քանի պատկերներ կընշմարուին հազիւ հազ, և ներքևը արձանագրուած է "Ո Կ Բ. Թ. Ստուած ողորմի ես Տիմոթին և Մխիթարայ յաւրինողն խաչիս:,,

Իսկ հիւսիսային խաչքարի վերայ փորագրուած է "Թվ. Պ,,: Այս խաչքարից խիստ ճարտար արուեստագործ քանդակութիւնը կզմայլեցնէ զտեսողս. սոյնպէս և համօրէն եկեղեցին դրեթէ քանդակագործուած է խիտ ու հոծ դրուագներով ու արձանագրութեամբք, և թէպէտ մանրամասն նկատելով՝ զուգապատշաճ և հաւասար միմեանց չ'երևին, բայց և այնպէս՝ ճարտարապետութեան գեղանի օրինակ կը հանդիսանայ աստ: Սոյն գաւթէս ի տաճարն մտանելոյ դրան երկու կողմանց՝ այս է՝ արևելեան անկեանց մէջ կան կրկնայարկ մատուռներ, որոց հարաւային վերնայարկ մատռան դրան վերայ փորագրուած է,

"...իէ

,,ի յանուն յիշատակ սուրբ Թադէոս
,,առաք . . Լ խորանիս (,) յիշատակ
,,Կիրակոսի հաւր Դաւթի և վ . .
,,իւր։,,

Ն։կեղեցւոյս շինութիւնը եղած է 1214 (ՈԿԴ) Փրկչ. թուին, որոյ յիշատակագրութեան արձան՝ քարահիւս տաճարին արևմտեան մեծ դրան (ի մէջ դաւթին) շրջանական կամարաձև քարին վերայ՝ նոյն ձևով՝ երկու և կէս տողով փորագրուած է այսպէս։

,,Ի ժամանակս թագաւորացնոյն Հ։ա-
,,քարիայի և Լեանէի նորին հարազատի
,,և որդւոց նոցին Շ։ահանշահի և Ա։ա-
,,գին (,) և յառաջնորդութեան Բարսղի
,,միայնաւորին և աշխատութեամբ եղբայ-
,,ցըս շինեցաւ Պաթուղիկէս մեծապատ։
,,ՈԿԴ։,,

Ն։կեղեցւոյս հիւսիսային որմն կոկեալ միապաղաղ վէմ է՝ առապարին երեսը, որ կրկին անգամ բարձր է քան զեկեղեցին. երկանաքարի նման է վէմը, որոյ մէջ կը-

տրուած ու փորուած են չորս վիմափոր եկեղեցիք, որոց երեքը որմնակից է եկեղեցւոյն և գրեթէ հաւասար յատակով. իսկ չորրորդը ոչ այլ վերայ առաւել ընդարձակ և քառակուսի դիրքով։

Առաջնոյն մուտքը գաւթին արևելեան հիւսիսային անկեան կից է, և հաւասարապէս ի լայնութիւն և յերկայնութիւն ութն ոտք է, կամ քառասուն քառակուսի դազ Պարսից։ Ձեղունը գմբէթաւոր բարձրացած է, և հարաւային կողմէն բոլորշի լուսամուտ ունի։ Յատակէն քան ոտք բարձր է։ Ռեմը, սեղանը և խորհրդատեղը միևնոյն վիմէն գործուած է անբաժան։ Այս եկեղեցւոյ հիւսիսակողմը մի խորշ կայ ութն ոտնաչափ դիրքով, կրկին կամարով զատուած, յորում կան գերեզմանները և հապա հազ կընշմարուին երբեմն արձանագրութիւնք գանուիլը։ Աղերց հիւսիսային դասէն կելնէ սեղրակ և անախորժ ջուր, որ եկեղեցւոյս և գաւթին յատակին ներքևէն կանցնի և ի գետակն

կը թափի։ Հիւսիսային որմին վերայ՝ կամարաց ներքև՝ քանդակեալ փորուած է վիթխարի գլուխ եզին՝ ունելով մանեակ ի բերան, յորմէ արձակուած շղթաներով կապուած կան երկու առիւծ դէմ առ դէմ, և մի արծիւ թևատարած կը սաւառնի սոցա վերայ՝ որ մագլով ու կտցով մի գառն բռնած ունի։ Այս պատկերի գուշակութեան վերայ մի ծանօթութիւն գտանել դժուար է։ Այս եկեղեցիս փորել տուած է Պռոշ իշխանը, որոյ յիշատակագրութիւնն ինչպէս և շինութեան եկեղեցւոյս՝ հարաւային որմին վերայ՝ ութն և կէս տողով պարզ փորագրուած է։

,,Ի Տէրութեան բարեպաշտ Աստուածա-
,,սէրթագաւորին Վրացաւորին և Հա-
,,շահի և որդւոյ նորա Օրաքարիայի ես Պը-
,,ռոշ որդի Վասակայ յազգէն Խաղբակայ
,,զանձագին արարի ի տէրանց աշխարհիս
,,զմեծահռչակն Երիվանս լերամբ և դաշ-
,,տաւ և ամենայն կազմութեամբ որ կայր
,,ի սմա (.) փոխեցի ի վեմէ տուն Աստու-

,,Ծոյ յիշատակ ինձ և որդեաց իմոց և ա-
,,մուսին իմ Յուսթլու խաթունին ի մոլքն
,,պանէն պվի ի պոռան սոբի Գեղարքին
,,վանք *) ։ ,,

Այս տաճարի կից արևելեան կողմն մի-
մեանց մէջ փորուած մի և նոյն վիմէ գե-
ղեցիկ երկու եկեղեցի կայ, ներքինն խա-
չաձև. և վերոյիշեալ եկեղեցւոյ նման՝ բե-
մերն՝ աստիճաններն՝ սեղաններն և խոր-
հրդանոցներն բոլորովին մի և նոյն միա-
պարագայ վիմէն քանդակագործուած են։
Սոցա դռները քարաշէն դաւթին հիւսի-
սային կողմն են հանդէպ արև. հիւս. սեան։
Սոցա մէջ չըկայ ոչինչ արձանագրութիւն
կամ յիշատակարան, ուստի և չէ յայտ՝
յորմէ շինեալ են և թէ ե՞րբ։ Կարծիք կայ՝
զի այս երկու եկեղեցիները ի հնուց շին-
ուած լինին, և սոցա անուամբ Մենաստանս
կոչուած լինի Այրիվանք։ Թէև առաւել

(*) Նոտրով նշանակածներս այլ տեսակ գրով
և գուցէ եաքէն գրված լինի։

հնագոյն վիմափոր մատուռ կը նշմարուի վանուցս մէջ, բայց զայսպիսիս աւելի ճըշդութեան կարծել հաւանական պէտք է լինի։

Ղորդ վիմափոր եկեղեցին՝ որ քան զերիս եկեղեցիս մեծ և գրեթէ նոցա տանեաց վերայ է, որոյ դուռը քարաշէն եկեղեցւոյ դուրսը՝ մեծ վիմին արևմտեան հարաւոյ անկիւնն է, յորմէ հինգ քայլի չափ յառաջանալով կը մատնուի յեկեղեցին։ Փորուածքը չորս սիւներու վերայ ներքնախարսխներով և վերնախարսխներով կամարազարդ և բոլորովին մի և նոյն վիմէ է։ Ձեղունը արտաքոյ զմբեթաւոր փորուած է, և մի լուսամուտ ունի։ Ներքը քառակուսի է. բայց սեղան, բեմ և այլ հարկաւոր տեղեր չունի, և զբեթէ գեղունը հաւասար է։

Այս եկեղեցին փորել տուած է Գոռշ իշխանի որդի Գապակ՝ ինքեան և ամուսնոյն ի յիշատակ. որոյ արձանագրութիւնը հիւս. արև. սեան վերնախարսխէն սկըսեալ՝ կլորութեամբ փորուած է այսօրինակ։

,,Աղնականութեամբն Աստուծոյ ես
,,Պապաքս որդի Պռաւշոյ և ամուսին իմ
,,Ղուզուքան փոխեցաք զժամատուն
,,Յինքնաբուն*) վեմէ յիշատակ հոգոց մե-
,,ղոց և զաւակ մեզ անմահ ի հալալ
,,արդեանց մերոց և եղև առաջնորդու-
,,թեամբ Տէր Մարգարի**) թիվ. 21Ը
(1288),,։

Այն եկեղեցւոյ հարաւ. արևել. սեան վերայ հնագոյն ձևերով և փակագրով քարեալ է հետևեալ ոտանաւոր արձանագրութիւնը առանց թուականի։

,,Սուրբ նշան Տէրունական(՝)
,,Սիմաւոն Վ՝զին (զուցէ Քարպաքէ-
,,պին) լեր պահապան
,,Հոգւոյ նորա պատապարան
,,Եւ անցանացն քաւարան(.)
,,Որ եւ պարգևս անանցական

(*) Ի Ստորագ. երից. գաւ. Արարատայ. Հահխ. յինանափոր գրուած է։

(**) Անդ Գրիգորի։

,,Եկեղեցոյս սուրբ Գեղդան (Գէ-
ղարդան)
,,զԱմաւուրքս Հրաշազան
,,Զարդարեալ բանիւ Աստուածա-
կան
,,Ի քէր յիշատակ անջնջական
,,Եւ բխ(դուցէ՝ քաջբէրօտ) միշտ յա-
ւիտեան(.)
,,Պայծառութիւն տաւնից լման(,)
,,Որոյ ամաց հանդիսարան(,)
,,Զոր ստացաւ բազում բաղձմամբ
,,Ի զուարճութիւն նորոգ մանկանց
քէրքեալ պանն է,, :

Պերոգրեալ վիմափոր եկեղեցւոյ վերայ ի հարաւակողմն՝ մի և նոյն վիմին մէջ փորուած մատուռներ կան, թէ առանձին և թէ միմեանց մէջ, որոց ոմանց մէջ սեղաններ կան պատարագելոյ աղաղաւ, և նոցա միոյն ունեցած արձանագրութենէն հաղիւ կարողացայ քաղել հետեւեալ թուական և անունը, որ է ,,ի թվին ՉԹԴ: Գրիգոր ,, : Ամանապէս արե-

ելեան կողմը՝ ի ձորն իջանելու դրան հանդէպ՝ միևնոյն վիմէն փորուած մի-մեանց մէջ մատռունք կան. որոց միոյն մէջ ի վերայ պատին փորեալ է ,,սուրբ Գ-րիգոր Հայոց,,, ներքին հիւս. կողմի մատռան դրան վերայ գրուած է ,,ի թը. վիս . . Գ,,, մէջտեղի մատռան հիւս. պատին վերայ՝ սեղանին կից՝ ,,ամենա-սուրբ Նշխարդուխիւն,, քանդակուած է։

Գանուցս արևմտեան կողմը՝ արտա-քուստ՝ պարսպին կից՝ մենաստանին վե-րայ բաշացած սեպացեալ մեծ վիմին գրկին մէջ՝ նոյն վիմէն անբաժան հիմն ունենա-լով՝ մի այլ բլրաձև վիմակոր կայ, որ կրկին յարկերով բոլորովին փորուած է, միայն երեսն քարահիւս զարդարեալ է։ Ն.յս երկայարկ փորուածքը կրկին բաժանուած է մատուռներու, և ունին վէմքարեր, սուրբ խորհրդոյ սեղաններ և խորհրդանոցներ՝ առանձնութեամբ կրօնաւորաց պատարա-գելոյ համար։ Ն.յս մատռանց իւրաքան-չիւրոց մէջ հանդերձ պատարագչաք հաղիւ

չորս չորս հոգի կըպարունակուին։ Վերնայարկ մատռանց հարաւ. արևելեանին մէջ հարաւ. հիւսուածոյ պատին պատուհանին վերայ հեռևեալ թուականը կայ. ‘‘ի թուիս. ՉԾ. Նորոգեցաւ սուրբ Աստուածածինս։,,

Այսոցիկ մատռանց արևմտեան երեսին տաշուած և հիւսուած քարից վերայ ոչ սակաւ արձանագրութիւնք կան, յորոց թուական ունեցողները կարևոր համարեցի օրինակել։

Նոյն երեսին հարաւային եզերքին մօտ, կամ շարժական սանդղով՝ ելանելու և ներս մտանելու. դրան հարաւային կողմը փոքրիկ պատուհանին ներքևով հեռևեալը արձանագրուած է կարճ և երկայն տողերով։

‘‘Ի թուիս ՉԱ։ Սս ԱՀ աքարեան ելի ,,սուրբ Աստուածածնիս, նորոգեցի զԱս-,,տուածածինս ի հալալ արդեանց իմոց և ,,գնեցի զԱմարիին հողն ի դահեկան. և ,,զՔողահայրէրն Երթզոյի ՝ասանայ ի դա-,,հեկան (.) և եառ ընծայք սուրբ Աս-

,,տուաճաճնիս, և սպասաւորք խոստա-
,,ցան Ռ. ժամ. . . . Ը. ինձ Մամքանայ.
,,ով ոք զայս հայրենիքս այս եկեղեցոյս
,,հանցէ, ՅԺՌ. Հայրապետաց նզովեսս-
,,ցի . . . ,,:

Նոյն դրան հիւսիսային կողմը:

,,Ի թվ. ՈՒՕ. ես Ստեփաննոս Կուր-
,,կեա . . ցեռու զիմ հայրենի հողն զՌա-
,,ղայ Փաւղոց եռու ի սուրբ ուխտս յա-
,,ռաջնորդութեան Հաւր Գրիգորոյ: Գ.
,,աւր ժամ ի տարոջն Ստեփաննոսի (.)
,,որև խառնեցաւ ի Մաքէոպրոյն մեծաւ
,,պշխատութեամբ: Ռ աւր ժամ Սարեմ-
,,արոյ զաւրն (՝) հաւրն ու զաւր մաւրն,
,,և Ռ աւր Սիրիբախտին....:,,

Սորա ներքև չորս տողով:

,,Ի թու. ԼՍԹ: Գրիգորասէր իշխա-
,,նաց իշխանքն Հաքար և Լուանէ վերատին
,,դարձոյց զՋուրն Ամառնատոպուէ: Նշ. և
,,Ուրբաթ ի սուրբ ուխտս (.) զՀաւրն որ է
,,ուրբաթ. . . և բնակիչք տորա խոստացան
,,զՀաւգ խորանն զՀաստուածածին բովան-

,,դակ տարին պատարագել զԲրիատոս
,,յանուն նոցա....։,,

Նոյնպէս երեք տողով։

,,Դս Աղիզս սնեալ ի տան Խուրթլու
,,խաղեթունին և Պռաւչոյ էտա- Ի դահե-
,,կան(.)և սպասաւորքն խոստացան ի տա-
,,ղին Ա. աւր ժամ. որ խափանէ ծէրանց
,,պոչան է։,,

Նմանապէս՝ վեց տողով։

,,Ի թ. ՈՂ։ Դս տէր Ստեփաննոս Ա-
,,ղուա..ի.... Կաթողիկոս եղէ միաբան
,,սուրբ ուխտիս Ա.յրից վանաց յառաջ-
,,նորդութեան հաւր Գրիգորի և Եսու
,,զԱնդրէի առաքելոց նշխարն և սուրբ
,,Նշան ծնընդոց Յոհան. և բնակիչք տե-
,,ղոյս խոստացան ինձ զտաւն Փոխման Տի-
,,րամաւրն. Գ.. աւուրն յամենայն եկե-
,,ղեցիս պատարագել զԲրիատոս..։,,

Նոյն մատռանց ստորայարկ վիմին արտաքուստ երեսի վերայ քանդակագործուած տասնէն աւելի խաչեր կան. յորոց երեք հատին վերայ խիստ մաշուած և գրեթէ

դժուարանշմարելի արձանագրութիւնք կային, որոց միոյն հազիւ թուականը և մի քանի բառերը կարողացայ ընթեռնուլ։

"ՈԺԴ թվակ

"Ա՛ա յ ոց

Կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութիւն . . . . . .

. . . . . .

. . . . . ,,

Վերոյիշեալ մատուռներէն մի քանի քայլ դէպ յարևմուտս հեռու վիմափոր մեծ այր կայ, երեսը բոլորովին բաց, որ վառանգաւոր դիրք բռնած է, յորմէ արդէն մի մեծ կտոր փրդած անկեալ է ստորև։

Կան այլ ևս վիմափոր և գեղանափոր այրեր *) յորս են մատուռներ, որք երբեմն

(*) Ի սոցանէ միոյն մէջ՝ որ քառորդ վերստի չափ հեռաւորութեամբ դէպ յարևմուտս՝ ի վանս գնալոյ ճանապարհին ձախակողմը ժայռի ներքև է, մի քանի տարի առաջ մերաշնեայ մանկունք ոմանք խաղացած միջոցին՝ միեն միամտութեամբ նոյն

ասպատակող հրոսակներէն և ազգի ազգի թշնամեաց արիւնարբու ձիրաններէն զերծանելոյ աղաչաւ՝ շրջակայ ՝ այկազն բնակչաց և վանականաց և այլոց ապաստանարաններ եղած են, որոց բազումք արդ-

---

ժայռի ներքև գտնուած փոքրիկ ծակէն ի ներքս կմտանէ, և ահա կտեսնէ մի քանի բաներ. անմիջապէս իմաց կը տայ վանահօր Միքայէլ Վարդապետին Զամբեանց. որոյ հետ կըփութան անդր, և սակաւ ինչ ևս փորելով կգտանեն մի հատ երկաթ վարագուրի, որ այժմ գրուած է հիւսուածոյ եկեղեցւոյ խորանին վերայ և երկու հատ զանգակ՝ մին՝ որ միւսէն գոյզն ինչ մեծ է, հետևեալ արձանագրութիւն ունի։ ,,Ցիշատակ է զանգակս Խօճայ ,,Նուրվերտու որդի Աւետիքին—սուրբ Գեղարդայ։ Թվ. ՌՃԾ։,, Սորա վերայ կան նաև փորագրուած պատկերներ՝ 1) Խաչելութեան Քրիստոսի, 2) Աստուածածնայ Ցիսուս Որդի ի գիրկն՝ ոտից վերայ կանգնած, 3) Ս. Գայիանեայ և 4) օրհնելոյն Քրիստոսի զմանկունս։ Իսկ միւս զանգակին վերայ գրեալ է, ,,Ցիշատակ է Գետրոնեցի Առաքելի որդի Գրիգորին ի դուռն սուրբ Գեղարդին։ Թվ. ՌՃԽԸին,,։

դարև անառիկ բերդեր և անմատչելի ամրոցներ կը ձևանան ցարդ։

Ի շրջակայս երբեմն բաւական գիւղեր և բնակիչներ գտնուած են։ Այժմ սակաւ գիւղօրայք *) կան, իսկ գտնուածներէն շատերուն մէջ և Թուրքեր և Պարսիկներ և Քուրեր կը բնակին ինչպէս ի Հայոց—Թառ գիւղն, Յաղջաբերդն և Յայլանս։

Ասա արժան է յաւելուլ, զի Գեղարքունեաց

(*) Ցորոց չորս գիւղօրայքն Գողթ, Մէհրապ, Քուրտքէնտ, և Թէլիէ—Պաշ՝ վանքին կալուածքներն են՝ Միքայէլ վարդապետի ջանիւք գնուած։ Առաջինը թէև նախ բոլորը Պարսիկ բնակիչ ունեցած է, բայց այժմ 12 տունը Հայք են և վերև քարաւիան վերայ կբնակին, և 8 տուն Պարսիկ են, որք ստորև ձորին մէջ կբնակին։ Մի Քահանայ կայ, և ժողովուրդը Գեղարդայ մէջ կը կատարէ իւր հոգևոր պարտաւորութիւնքը։ Երկրորդը՝ 12 տուն Հայ, երրորդը՝ 3 տուն, և չորրորդը 18 տուն Հայ բնակիչք ունին, և ամենուն մի եկեղեցի և մի քահանայ կայ, որ և նոցա մանկանց կարդալ և կուսուցանէ։

դայ շրջակայ երկիրը առհասարակ բարեբեր է, այլ երկրագործութիւնը աւելի մշակուած չէ: Վարուցանքը ընդհանրապէս ցորեան և գարի է: Մի քանի տեսակ և այն դոյզնագիւտ պտղատու ծառեր կը գտնուին իտեղիս տեղիս:

Բնակչաց բարոյական և մտաւորական վիճակները ցաւալի դրութեան մէջ են, և բաւական ժամանակի ու անխոնջ աշխատութեանց կարօտ են զայնս բարւոքելոյ համար:

Եղլաղզի բնակչաց մեծ մասը աւազակաբարոյ և ծոյլ են. կը սիրեն աւելի այլոց աշխատութիւնը վայելել:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՄԵՆԱՍՏԱՆ

Ի ՀԱՅՈՑ ԹԱՌ.

Երբեմն անուանի և երևելի՝ իսկ բաւական ժամանակէ հետէ իսպառ աւերակ և տխրատեսիլ Ամենափրկիչ անուանեալ Մենաստանն՝ որ ՝ի աւուց կամ ՝ի այոց— Թառ կոչեալ գիւղէն դէպ յարևմուտս մի վերստ և կէսի չափ (կամ տակաւ ինչ աւելի) հեռու է, Գառնւոյ գեղջ հանդէպ՝ Ազատ դեռին հարաւային կողմը՝ լեռան ի լանջս՝ առանձին բլրակ ձևացած ի գագաթն՝ տափարակ՝ գեղեցիկ և բարձր ի դիրս կը գտնուի, զուարճալի և ընդարձակահայեաց տեսարան և բարեխառն օդ ունի։

Բարձր և ամուր պարիսպներով շրջանակի պատեալ է բուն Ամենափրկչի Մենաստանը, որոյ մեծ դուռն հարաւ. պարսպին արևելեան անկեան մերձ է։

Ի միջի նոյն պարսպաց՝ երկու աւերակ եկեղեցիք կան միմեանց մօտ և գրեթե թէ կից։ Հարաւային կողմինը «Գրիգոր Մագիստրոսի ի ՀԿԲ (1013) Հայոց թուականին շինել ասուածն է *)։ Իսկ հիւսիսայինը ի ՌՀԺ (1712) Ազգ. թուաբերութեան Աստուածատուր կաթողիկոսին նորոգ կառուցանել սկսածն է, որ ցաւալաթոռան հազիւ հասուցանելով Պոլսական երուզալիմների յաճախ և աւերիչ

(*) Յայտնիկ միջոցս շատ վանքեր՝ ոմանք առ ժամանակ ինչ բարձի թողի մնացեալ ի բնակչացն, բազումք խպառ ամայացած և այժմ հետզհետէ շինութեանց թուլանալով յերկիր կ'տապալին, և ի յաւերակսն տատրակք և բուեր բոյն կը կազմեն։

յարձակմունքներէն ստիպեալ՝ կիսակատար մնացեալ է *)։

Գրիգոր Մագիստրոսի շինել տուածն կըբաժանվի ի տաճար և ի գաւիթ. խորանը սակաւ ինչ խոնարհած է։ Երկու կողմը ունի պահարաններ, ինչպէս Աստուածատուր կաթողիկոսի շինել սկսածն ևս ունէր։ Շինութեանց դիրքերէն և այլ ինչ

(*) Կերևի թէ արժանայիշատակ Յովհ. եպիսկոպոսն Շահխաթունեանց ինքն անձամբ ականատես չէ եղած Ամենափրկիչ վանուց, որ Գրիգ. Մագիստրոսի շինած եկեղեցւոյ շինութեանց նշմարանքը չկայ կասէ։ Ի՞նչ են ուրեմն պարսպաց մէջ եղած երկու աւեր եկեղեցիք։ Աստուածատուր կաթողիկոսին շինել տուածն ո՛չ թէ Մագիստրոսի կառուցածին տեղւոյն վերայ է՝ այլ առ ընթեր, և մինչև անգամ գուցէ զայն ևս կրկին շինել կամեցած է, զի նորա կոփածոյ սև և մոխրագոյն քարից ձեռք զարկած չէին, ուստի կամեցած է փլատակները մաքրել տալ. իսկ նոր շինուածին կարմրագոյն քարերը բոլորովին նոր կտրուած և բերել տուած է ի մերձակայից։

ինչ նշաններէն կիմացուի՝ զի թէ տաճարը և թէ գաւիթը զմբէթաւոր եղած են, վերջինն նաև հատ սեանցն վերայ զարդարեալ է, ըստ որում ցարդ կմնան սիւնքն՝ վերին և ներքին խարխսքն, որոց մի քանիսը քակեալ և արտաքս ցան և ցիր ղրուած են գուցէ 1712 Փրկ. թուին միջոցները, և մի քանիսը թաղուած կամ խառնուած կմնան փլատակներու մէջ ի գաւիթն :

Երկու եկեղեցեաց որմունքն ևս կոփածոյ քարերով կառուցեալ են, ինչպէս նաև զմբէթքն եղած են. տոցա վերայ և ոչ մի կարևոր արձանագրութիւն չկարդացայ գտանել բաց ի սեանց՝ վերին և ներքին խարսխաց և մի քանի քարից վերայ եղած անշան և անթուական յիշատակագրութիւններէ, որոնք վանուց պայծառութեան օգնելով՝ փող կամ հող ելն. տալով, ձրի ծառայութիւնք վարած՝ ի փոխարէնն Ս. պատարագներ մատուցանելոյ սահմանուած աւուրք լինել կ'իմացուէին.

միմիայն կարևոր արձանագրութիւն եղած է, զոր երջանկայիշատակ և բազմարդիւն Սիմէօն Կաթողիկոսի Ջաճքուէն (ինչպէս նաև Շահխաթունեանց Եպիսկոպոսի ըստորագրութեան մէջ հրատարակեալ է) հանած՝ ապրև կ'հաղորդեմ հետաքրքիր ընթերցողաց։

Այս մենաստանիս համար ի ՆԼԳ (684) Հայ. թուականին հաստատուած է կը գրէ Սիմ. Կաթ. ի Ջամբռն, սակայն ի սկզբանն ինչ անուն ունեցած լինելը, և թէ մենաստան է եղած՝ չէ բացայայտ։ Թէև հաւանական կարծիք կայ մենաստան լինելոյն վերայ, որ առաջին անգամ մի եկեղեցի կառուցանել տուած է Գէորգ իշխան Գեղարդոյ, որոյ հիման նշմարանքն կ'երևին երկու աւերակ եկեղեցեաց յարևելակողմն։

Սիմէօն Կաթողիկոսն կը գրէ թէ՝ առաջին Աշոտ իշխանն իւր որդի Սմբատ քաջ Բագրատունւոյ ձեռամբ տանալով Փրկչ. անձեռագործ պատկերը ի Կ. Պոլսոյ, շինեց

ապս վանքը և կոչեց Ս.Ղեռափէին։ Իսկ Շահ-
խաթունեանց՝ մեր հին պատմագրաց համա-
ձայն կասէ, թէ Խիւրատեան Աշոտ Դաւ-
ռիւնից իշխանի որդին (Սմբատ) ի Յու-
նաստանէ բերելով այն պատկերը՝ ի Պո-
զոմիա գաւառ ի Դաշիւնս (Ֆին—Պա-
յաղիտ) առ հայրն՝ անդ Ս.մեռափրկիչ
անուամբ մի եկեղեցի կանգնեց, և ինչպէս
Ղևոնդ պատմիչ կը գրէ. "իւր ոտանին
մէջ,,։ Դս հաւան եմ և համաձայն Շահ-
խաթունեանցին։ Այց երեքհարիւրի չափ
տարիներէն զկնի՝ որպիսի և էցէ միջոցներ-
ով Գրիգ. Մագիստրոս ի ձեռս բերելով զայս Ս.մեռափրկիչ անուանեալ պատ-
կերը՝ փոխադրած է յիւր կարուած ի Ֆա-
յոց—Գառ, և նորա արեւմտեան սահ-
մանը մերձ ի Գառնի կառուցանելով մի
չքնաղ եկեղեցի, անդ զետեղած է զնոյն
պատկեր։ Ուստի կը հետևի թէ՝ երկու
եկեղեցիներ (կամ վանքեր) եղած են ի
Ֆայաստան Ս.Ղեռափէին անուամբ, որոց
առաջինը շինած է Աշոտ իշխանն Խիւրա-

տեան Գարիւնից յատորոս, երկրորդը կառուցած է Գրիգոր Մագիստր. և առաջնոյն Ամենափրկիչ*) անուանեալ պատկերը անդր փոխադրած, յորմէ և զանուն առած։ Այժմ երկուքն ևս աւերակ են, և առաջնոյն բոլորտիքը (՝ին—) Պայազիտ քաղաքին գերեզմանոցն է, և եկեղեցին ցարդ Ամենափրկիչ կը կոչուի ի բնակչացն։ Իսկ պատուական պատկերը կը գտնուի ատ ի Մայր աթոռս ի սուրբ Էջմիածին, և որ մեր Եկեղեցւոյ փառաւոր և պանծալի հնութիւններէն և նախնեաց յիշատակ և նշխարներէն մինն է**)։

(*) Սոյն անուամբս վանք այժմ ի Նոր-Ջուղա ևս կայ մերձ ի Սպահան, ինչպէս և յայլ տեղիս ինչ։

(**) Ատ կարևոր է այս պատկերիս վերայ տեղեկութիւն ինչ տալ ընթերցողացս ինչպէս գրած է Շահխաթունեանց։

Սոյն այս Ամենափրկիչ անուանեալ Յիսուսի ի խաչէն իջման պատկերը Յովհաննէս Աւետարանչի ձեռագործ է ըստ Գրիգոր Մագիստրոսի, և

Գ-ամբ կրկին (վերջին) Ամենափրկչի տեղագրութեան։

Գ-անուց հիսխային պարսպին գրեթէ կիսէն սկսեալ դէպ ի յարևմուտս՝ գետակին կամ ձորոյն վերայ կը մնան շինութիւնք, այսինքն միաբանաց կիսակործան

երկար քառանկիւնի անիւտ փայտեայ տախտակի վերայ է. 3 թիզ և 4 մատ երկարութիւն ունի, 1 թիզ 7 մատ լայնութիւն, իսկ թանձրութիւնը երկու մատնաչափ է։ Ի գագաթ Խաչին կայ Հայրական Աջոյն նշան, և նորա ստորև Յիսուսի աղաւնակերպ Հոգին՝ ըստ աւետ. բանին՝ «Հայր ի ձեռս քո աւանդեմ զՀոգի իմ»։ Ղուկ. զԼ. ԻԳ. հմր. 46։ Խաչին երկու կողմը երկու մարդիկ կան, որոց աջակողմեանը՝ Յիսուսի բաղուկը խաչէն ազատելով արկեալ է ուսին վերայ, և նորա մարմինը ձեռքերով բռնած է. իսկ ձախակողմեանը ի ձեռին ագցան բռնած բևեռը կը քաշէ Յիսուսի ձեռքէն և խաչէն։ Յիսուս և այս նշանակածներս հանդերձ խաչիւն և տախտակին շրջակուսի եղերքով դրուագեալ փորածոյ են. և միւս մակերեսոյթ տախտակին ամենեին հարթ հաւասար է։

սենեակք, և արևմտեան պարսպին ցկէսն՝ ոտեսատուն, և այլ պիտոյից տեղուանք՝ ինչպէս մեծ գոմանոց, փռատուն ևն։ Պարսպաց արևմտեան հիւս. անկեան մէջ գտնուած շինուածոց ի վերայ կը նշմարուին վանահօր բնակարանք, և տակաւին կըդիտուէին երկուց սենեկաց բաժանմունքները, դրանց սեմից և սեանց պատուանդանաց և որմոց տեղերը։

Ի վանս մտանելոյ հարաւ. մեծ դրան արևել. սեմին կից մի աղբիւր կայ՝ որոյ ջուրը այժմ ցամաքեալ է, այս ջրոյ ամուր շինուած ճանապարհը լուան վերայով կ՚երթայ մինչ ցՀոռ։ Կ՚երևի թէ գեղանաբուղխ մի աղբիւրէ առնուած է այս ջուրը, որ այժմ անյայտացած է, և ճշդիւ չկարողացայ իմանալ թէ՝ այն ճանապարհին ջուրը ուստի՞ բերեալ է կամ ո՞ւր է աղբիւրն։

Վանուցս մէջ ոչինչ կարևոր յիշատակարան գտանել չկարողացայ բաց յայնմանէն՝ զոր վերև յիշեցի, և որ արդէն

հրատարակեալ է բարեյիշ Նպս. Հ՝ահ-
խաթանեանց, զոր և մեք ատէն ի լոյս
տալ արժան կը համարիմք։

«Թուին ՆԿԲ (1013) ի թագաւո-
րութեանն Գագկայ և ի Հայրապետու-
թեան Տեառն Սարգսի, ես Գրիգոր Վա-
գիսարոս վերատին շինեցի զեկեղեցիս յի-
շատակ ինձ և ծնողացն իմոց. նաև ի տե-
ղանց աշխարհիս գանձագին արարի զվայ-
ելս տրա լերամբն և դաշտամբն և ամե-
նայն կազմութեամբն որ ի սմա (՝) քա-
ռադէմք (՝) չորս անկեամբ յաջամբ և ա-
հեկամբ (,) ի դիմաց և ի թիկանց։ Նա-
տուաք յիշատակ անջնջելի արձանագրով
և աշխարհակալ թագաւորի թղթովն և
կայսերական կնքովն, հաստատեցաք ձե-
ռագրով և Հայրապետական նամակովն։
Նա և ի նաւակատիս տաճարիս (՝) զոր շինե-
ցաւ, ընծայեցաք զՀայրենիս մեր տուրբ
եկեղեցւոյս (՝) որ է Հայոց—Թուռ, հան-
գստարան և օթարան անձեռագործ տուրբ
պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայ-

ոին, ինդրելին Յովհաննու աւետարանչին, հրամանաւ մօր Տեառն մերոյ սուրբ Աստուածածնէ. և նորոգեալ հաստատեցաք վերստին սուրբ ուխտս վերջինս քան զառաջինն. ասա եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ Եկեղեցւոյ *)։ Գրիգոր Վ. ահրամ Պիտանին։,,

---

(*) Ասա Ազգիս բանասիրաց ուշադրութիւնը կը հրաւիրեմ, զի Մագիստրոս և ասա գրելով ասոր եղած զվէմն հաւատոյ հիման սուրբ Եկեղեցւոյ՝ կակնարկէ և կ'իմացնէ Քրիստոսի Ս. Խաչը, ուստի և յօդս կը ցնդին պապամոլից ջանքերը և մեկնութիւնքը ի բանն կեցո ընդդէ ծառայէ ո՝ ընդ է հռոմայ գահէցն վերապարեցեր, որ եղեն զվէմն հաւատոյ հիման սուրբ Եկեղեցւոյ Նոյն։ Քանզի Մագիստրոս բարեմաղթելով իւր որդւոյն համար՝ որ քաղաքական ատիճանով ինչ վերապատուեալ և մեծարուած էր ի կայսրէն Կ. Պոլսոյ այս ինքն ի հռոմայ գահէցն, ուր յայնժամ Փրկչ. սուրբ Խաչը նոյն կայսերական մայրաքաղաքին մէջ կը փառաւորուէր և կը պանծայր, սոյն խօսքերը քան զայս աւելի նպատակ և մեկնութիւն ոչինչ պարունակեն՝ մանաւանդ զի իմաստն կերև ի պարզագոյնս։

Այս Ամենափրկչեան վանուցս արևմտեան կողմը հազիւ մի քառորդ վերստ ի բացեայ *) կայ (մենաստանիս) միաբանաց գերեզմանատունն՝ իբր փոքրիկ սրածայր բլրակի վերայ յելս գնատկին, յորում քառակուսի՝ կարմիր և սև կոփածոյ քարերով շինեալ մի գեղեցիկ եկեղեցի ունի, որոյ խոնարհեալ գմբէթին հատուածքն ինչ ցարդ կը մնային: Խորանին յերկուս կողմունս կամարակապ պատհարաներ կան՝ ինչպէս Հայաստանի բոլոր վանօրէից և եկեղեցեաց մէջ ևս կը գտնուին բաց ի մատուռներէն:

Որա բոլորտիքն քանի չափ գերեզմանաքարեր կը տեսնուին այժմ: Այս Ն-

(*) Ցայսմ միջոցիս ի տեղիս տեղիս վիհեր կամ փոսեր կան, որք ոչ մինչ ցբերանն հողերով լցեալ էին: Սոցա մէջ ցորեան և այլ կարեւոր պարէն և պարագայք կը պահեն եղած ի պէտս վանուցս: Այսպիսի վիհեր առհասարակ ամենայն վանօրայք և գիւղօրայք ունին մանաւանդ ի Հայաստան:

կեղեցւոյ մէջ դիւրընթեռնլի շատ արձանագրութիւնք կը գտնուին, բայց ի մի քանիներէն՝ որոնք կոտրատեալ և մաշեալ են՝ ինչպէս արտաքուստ արևմտեան դրան վրայինները,—բայց ոչ ամենը թիւ ունէին, թող զի կարևորք ևս չէին։ Շատ իզձ կալայ դրան վրայի արձանագրութիւնքը առնուլ, բայց նախ՝ թիւ չունենալով, երկրորդ՝ փող կամ այգի և կամ հող աբուած՝ ի փոխարէնն պատարագ սահմանեալ լինելը կը յայտնէին, և երրորդ՝ դժուար և խիստ վտանգաւոր էր խարխուլ տեղը, և ի հեռուստ անկարելի էր ընթեռնուլ։

Այս եկեղեցւոյ արևմտ. հարաւային պատին անկեան կից կիսակամար մի մատուռ կայ, որոյ մէջ պատին վերայ դրտնուած արձանագրութիւնն ևս աւելորդ համարեցի՝ հետաքրքրական և արձանագրութեան թուական չլինելով։

Գերեզմանատան և Եկեղեցւոյ արձանագրութեանց կարևորները ահաւասիկ կը հաղորդեմք փափագողաց։

Հիսիային պատին վերայ. ''Պատա-
քին Աստուծոյ ես Գ-իրք և ամուսին իմ
Հ՝աքարս միաբանեցաք Ամենատիրկչիս և
գնեցաք զՏանծոլան Ջ՝ոշիկին ոչ փոխ Ո-
սպ. և տուաք ի տուրբ ուխտս (.) և սպա-
տաւորք տեղեցս խոստացան ի տարոջն Գ.
աւր պատարագել զՔ(րիստոս), Ր աւրն
ինձ և Ր աւրն Հ՝աքարին. . կատարիչքն
աւրհնին: ՁՈՒՐ թվ: ,,

Նոյն եկեղեցւոյ արևմտեան ճակատին
դէպ ի անկիւնը՝ պատին կից մի խաչարձա-
նի պատուանդանի վերայ — որոյ նման և
ի հիւս. կողմն այս ինքն արևմտ. դրան
յերկուս կողմանս ևս լինել կը նշմարուի,
որոյ խաչաքարն և պատուանդանն չգի-
տեմ ինչ եղած է, — հետևեալը արձա-
նագրուած է. ''ՈՆ թվ. [7]) Ես Սարգիս
անպիտան Բահանայ կանկնեցի զտուրբ
նշան Քրիստոսի (ի) քարեխաւսութիւն

(7) Թուականը փորագրեալ է պատուանդանին
հիւս. կողմը արևմտ. անկեան վերայ, իսկ յիշա-

ինձ և ծնաւղաց իմոց և շնորհաւորեալ աշակերտի իմոյ Աշոտոյ (*) որք երկրպագէք (՝) յիշեցէք աղա . . . ։ ,,

Նաև եկեղեցւոյ արևմտեան ճակատին հիւս. անկեան դէմ յանդիման մի տապանաքար կայ, որ հետևեալ արձանագրութիւն և թիւն ունի։

''Ի թվ. ՌՂԼ (8)

փոխեցաւ

Մոնկոռկ

որն ի Գրիգորաս յիշեցէք . . . ։ ,,

Պարապատամ Ամենաբիրկչեան վանուց Հարաւ. արևելեան կողմը կոփածոյ քարերով կառուցուած փոքրիկ բայց կիսաւեր մի մատուռ կայ Ս. Կարապետ անուամբ, զոր երախտագէտ երկք աշակերտք

տակարանը արևմտեան երեսին ընդ երկայնութիւնն։

(*) Վերջինն գժուարմամբ եղած է ինձ ճըշդիւ ե կամ է լինել։

կանգնած են իւրեանց բարերարաց վերայ, որք գուցէ վարդապետ կամ կրօնաւոր եղած լինին։ Այս մատուռը Հիւս. արևմտ. անկեան վերայ ունի շինութեան արձանագրութիւն և թուական ամբողջութեամբ։

Այն այս մատռան երկայնութիւնը 23 թիզ, լայնութիւնն 13 ½ է. արտաքուստ բարձրութիւնը 14 թիզ, իսկ ի ներքուստ կամարին մէջ տեղէն ցգետինն 22 ½ է։

Սատ հանգստարան եղած է, բայց թէ այս ևս միաբանից է՝ թէ հասարակաց՝ զհաւատին դժուարացայ տեղեկանալ։

Ահաւասիկ արձանագրութիւնը։

"Թվ. ՌԿՌ։ Շնորհիւն Աստուծոյ մեք նուաստ աշակերտք Սեթայ և Սիմեոնի Սոսթանէս և Մաթէոս և Գրիգորէս շինեցաք զսուրբ Կարապետս ի վերայ շիրմաց սոցա (.) և Առաջնորդիս սուրբ ուխտս ահմանեցին Ռ. Ն՝ բազարոյցն վասն հոգոց նոցա և այլ ինջեցելոցն որ յայսմ հանգստարանի։"

Դեռ չինքած համառօտ Տեղագրութիւնս՝ պատշաճ կ'համարիմ յաւելուլ, զի երբեմն Երևանայ վիճակին Առաջնորդ կը բնակէր այս վանուցս մէջ, որ խիստ պատուաւոր կը համարուէր՝ մինչև անգամ երբ նորա Առաջնորդ կը դայր ի Ս. Էջմիածին, զանդակները կը հնչեցնէին։ Ասա վանահայր եղած է Գրիգոր Վ. կայաւէրն որդին Մագիստրոսի։

Այս վանուցս անցքերը շատ են, և Առաջնորդքն բազում նեղութեանց, տապանաց և յափշտակութեանց հանդիպած ինչպէս յամին 1602 և ն։

Այժմեան Օ. Ս. Կաթողիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ՝ երբ ի 1868 թուականին օգտակարութեան գնացած էր ի Դեղարդ, յատուկ Կոնդակաւ սոյն Ամենափրկչիս աւեր վանքը յանձնեց Դեղարդայ վանահօր Միքայէլ վարդապետին՝ զնա ինքն կարգելով վանահայր նաև սոյն վանուցս Ամենափրկչի, որպէս զի շինեցնէ զայն ըստ կարելւոյն ազատելով ամայութենէ և

աւերակութիւնէն, և իւր կողմանէ մի փոխ-
վանահայր կարգելով՝ խնամք տանի և հո-
գայ նորա պէտքերը, վարէ շրջակայ սեպհա-
կան հողերը, միանգամայն պայծառացնէ
զայն, ուր շատ յարմար է մի հոգև. ուսումն-
նարան հիմնել և ազգօգուտ հանդիսացնելոյ

Բայց նորին Պ. Եպ. Օծութեան Պ. Հայ-
բպետի Կոնդակը անգործադրելի մնացած
է Պատուոյ անտառապետի և վանահօր
Զամոյեանցի ի մէջ պատահած մի կրու-
ոյ համար, սակայն երբ և իցէ մոռացբ-
ուած է վերանորոգել զայս և պայծառա-
ցնել, վասն որոյ և այլ կարևոր միջոցներ
անօրինած է Պ. Հայրապետս։

Ցիր թէ՝ Հաւիճոյ վանուց վերայ գըտ-
նուած Աղեքսանդրապօլցի բարեսէր ազգա-
յի ներէ Ջանիւք Յովսէփի Աւագ Քահանայի
Պատանեանց կազմուած արդիւնաւոր ընկ-
երութեան նման մի ընկերութիւն կազ-
մէին Երևանայ ազգայինք մեր՝ և զարդա-
բէին սոյն Ամենափրկչի վանքս, ուր և հիմ-
նէին մի հոգևոր ուսումնարան, և վե-

ձակին համար ուսեալ և կրթեալ քա-
հանայացուք հասուցանէին։ Թէև Ն-
բևանայ թեմ. դպրոցն ևս բաւական
կարէր լինել, բայց տեղւոյն օդ շրջակայ
գիւղօրէից մանկտեաց համար անտանելի
է, թողում ուրիշ անյարմարութիւնքն։

16 MAY 2013

30715